ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 դեկտեմբերի 2023 թվականի N 2119 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N 434-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի «Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման, պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 434-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրա-գեոդեզիական ֆոնդի ստեղծման, պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 7-ի N 434-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման, պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը:

2. Պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդն ստեղծվում, պահպան-վում և տեղեկատվությունը տրամադրվում է «Տարածական տվյալների մասին» օրենքի պահանջների համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի՝ պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերը պահպանվում, օգտագործվում են, և տեղեկատվությունը տրամադրվում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվա-կանի սեպտեմբերի 19-ի «Պետական և ծառայողական գաղտնիք բովանդակող տեղագրագեոդեզիական նյութերից ու տվյալներից օգտվելու համար թույլտվու-թյուն ստանալու կարգը հաստատելու մասին» N 1581-Ն որոշման պահանջների համաձայն:

4. Պետական (բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառի համար հավաքված սահմանափակ մատչելիությամբ) քարտեզագրագեոդեզիական ֆոնդն ստեղծվում, պահպանվում, տեղեկատվությունը տրամադրվում է լիազորված մարմնի Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից:

5. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդում նյութերն ու տվյալները համալրվում և դուրս են գրվում կոմիտեի ղեկավարի հրամանով ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

6. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդը (տեղեկատվական բանկը) ստեղծվում, համալրվում և թարմացվում է լիազորված պետական կառավարման մարմնի կողմից՝ «Տարածական տվյալների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի տվյալների հիման վրա:

7. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդում պահպանվում են «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքով նախատեսված՝ պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների արդյունքում ստացված նյութերն ու տվյալները, ինչպես նաև «Տարածական տվյալների մասին» օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված նյութերն ու տվյալները:

8. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական (բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառի համար հավաքված սահմանափակ մատչելիությամբ) ֆոնդի նյութերն ու տվյալները պահվում են կոմիտեում՝ անժամկետ:

9. Կոմիտեն Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական (բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառի համար հավաքված սահմանափակ մատչելիությամբ) տվյալների ֆոնդում

ընդգրկված նյութերի, տվյալների, մետատվյալների ցանկերը հրապարակում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալում:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

10. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերը և տվյալները ենթակա են տրամադրման N 1 ձևով սահմանված դիմումի կամ գրության հիման վրա, որտեղ նշվում են պահանջվող նյութի անվանումը, քանակը և այլ անհրաժեշտ տվյալներ:

11. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերից և տվյալներից կարող են օգտվել ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները:

12. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդից տեղեկատվությունը տրամադրվում է «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» և «Տարածական տվյալների մասին» օրենքների պահանջներին համապատասխան:

13. Քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերի (ոչ էլեկտրոնային տարբերակով) բնօրինակները տրամադրման ենթակա չեն: Օգտագործողներին քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերը տրամադրվում են թղթային և (կամ) էլեկտրոնային կրիչներով:

14. Տարածական տվյալները և մետատվյալները տրամադրվում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով: Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով տարածական տվյալների տրամադրման պայմանագրի ձևաթուղթը ներկայացված է N 2 ձևում:

15. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերի և տվյալների հաշվառման, տեղեկատվության տրամադրման մատյանների ձևաթղթերը ներկայացված են NN 3, 4 ձևերում:

Ձև N 1

Կադաստրի կոմիտեի
տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն
ստորաբաժանման պետ
_____

_____

_____
(դիմողի անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(դիմողի քաղաքացիությունը)

_____
(դիմողի բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը)

Հեռ. _____

Դ Ի Մ ՈՒ Մ N _____

Խնդրում եմ տրամադրել

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Վճարումը կատարված է, որի կապակցությամբ կցում եմ վճարման անդորրագիրը:
Դիմողի վավերապայմանները _____

ԴԻՄՈՂ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՋԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՋԳԱՅԻՆ ԳԵՈՊՈՐՏԱԼԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

քաղ. Երևան ___ _____
_____ 20 թվական
☐ իրավաբանական անձ
անվանումը _____
գրանցման համարը _____
գտնվելու վայրը _____,
որի անունից ☐ կանոնադրության և ☐ լիազորագրի հիման վրա հանդես է գալիս՝
անունը _____
ազգանունը _____
հայրանունը _____
հաշվառման հասցեն _____
անձնագրի (նույնականացման քարտի) տվյալները _____
_____
(սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)
էլեկտրոնային փոստի հասցե _____
սարքավորման ստատիկ IP _____
☐ 1 ամիս ժամկետով ☐ 12 ամիս ժամկետով
_____

_____
_____
(ստորագրություն)
(ստորագրություն)

☐ Վարչական սահմաններ
☐ Անշարժ գույք («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված կադաստրային քարտեզ)
☐ Գնահատում
☐ Իրավունք (գույքային իրավունքի տեսակ)
☐ Հողամասի նպատակային և գործառնական նշանակություն (հողատեսք)
☐ Հասցե
☐ Ռելիեֆ
☐ Մակերևութային ջրեր

☐ Ճանապարհատրանսպորտային ցանց
☐ Պլանաբարձունքային հիմք
☐ Աշխարհագրական անվանում
☐ Օդատիեզերական լուսանկարահանման տվյալներ

☐ ֆիզիկական անձ
անունը _____
ազգանունը _____
հայրանունը _____
հաշվառման հասցեն _____
անձնագրի (նույնականացման քարտի) տվյալները
_____
(սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)
էլեկտրոնային փոստի հասցե _____
սարքավորման ստատիկ IP _____
☐ 1 ամիս ժամկետով ☐ 12 ամիս ժամկետով
_____
_____
(ստորագրություն)
(ստորագրություն)

☐ Վարչական սահմաններ
☐ Անշարժ գույք («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված կադաստրային քարտեզ)
☐ Գնահատում
☐ Իրավունք (գույքային իրավունքի տեսակ)
☐ Հողամասի նպատակային և գործառնական նշանակություն (հողատեսք)
☐ Հասցե
☐ Ռելիեֆ
☐ Մակերևութային ջրեր
☐ Ճանապարհատրանսպորտային ցանց
☐ Պլանաբարձունքային հիմք
☐ Աշխարհագրական անվանում
☐ Օդատիեզերական լուսանկարահանման տվյալներ
(այսուհետ՝ պատվիրատու) մի կողմից և Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս _____-ի,

որը գործում է _____
հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի՝ կոմիտեն պարտավորվում է պատվիրատուի կողմից ծառայության համար նախատեսված վճարումը կատարելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կնքված պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին տրամադրել հայցվող բազային տարածական տվյալների յուրաքանչյուր խմբի առցանց հասանելիության Օ Ջի Սի Վի Էմ Էս (OGC WMS) հղումը 1 ամիս կամ 12 ամիս ժամկետով՝ համապատասխան թարմացումներով:

1.2. Ծառայությունները մատուցված են համարվում կոմիտեի կողմից տեղեկատվությունը պատվիրատուին տրամադրվելու պահից: Տրամադրված տեղեկատվության հնարավոր տեխնիկական թերությունների մասին պատվիրատուն պարտավոր է հայտնել 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Տրամադրված տեղեկատվության տեխնիկական թերությունների մասին պատվիրատուի կողմից նշված ժամկետում չհայտնվելու դեպքում տեղեկատվությունը համարվում է տեխնիկապես անթերի տրամադրված:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կոմիտեն իրավունք ունի տրամադրված տեղեկատվությունը պատվիրատուի կողմից երրորդ անձանց փոխանցվելու դեպքում պատվիրատուից պահանջելու կոմիտեին պատճառված վնասին համապատասխան փոխհատուցում:

2.2. Կոմիտեն պարտավորվում է՝

2.2.1. Պատվիրատուի կողմից տեղեկատվության տրամադրման համար սահմանված վճարը կոմիտեին փոխանցվելուց և տեղեկատվության դիմում ներկայացվելուց հետո պատվիրատուին տրամադրել տեղեկատվությունն ամբողջ ծավալով՝ սույն պայմանագրի 1.1-ին կետով սահմանված եղանակով:

2.2.2. Սույն պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի դիմելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել տրամադրված տեղեկատվության՝ հայտնաբերված բոլոր տեխնիկական թերությունները:

2.2.3. Սույն պայմանագրի 2.3.2-րդ կետով նախատեսված դեպքում պատվիրատուին վերադարձնել տեղեկատվության տրամադրման համար վճարված գումարը՝ վճարված գումարի վերադարձման մասին պատվիրատուի

դիմումը կոմիտե ներկայացնելու օրվան հաջորդող 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Տեղեկատվությունն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում պահանջելու անհատույց վերացնել ստացված տեղեկատվության՝ հայտնաբերված բոլոր տեխնիկական թերությունները:

2.3.2. Կոմիտեի կողմից սույն պայմանագրի 2.2.1-ին և 2.2.2-րդ կետերում նշված պարտավորությունների խախտման դեպքում պահանջելու վերադարձնել տեղեկատվության տրամադրման համար վճարված գումարը:

2.4. Պատվիրատուն պարտավորվում է՝

2.4.1. Վճարել տեղեկատվության տրամադրման համար սահմանված վճարը:

2.4.2. Ստացված տեղեկատվությունը չփոխանցել երրորդ անձանց:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Բազային տարածական տվյալների յուրաքանչյուր խմբի (Օ Ջի Սի Վի Էմ Էս (OGC WMS) առցանց հասանելիության ապահովման համար գանձվում է վճար «Տարածական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:

3.2. Տեղեկատվության վճարի չափը չի կարող պայմանավորվել տրամադրվող նյութերի ծավալից:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 1 ամիս կամ 12 ամիս ժամկետով:

4.2. Սույն պայմանագիրն ամբողջությամբ վաղաժամկետ դադարեցնել ցանկացող կողմը պետք է դրա մասին գրավոր հայտնի մյուս կողմին՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Պայմանագիրն ամբողջությամբ կարող է վաղաժամկետ լուծվել՝

1) կողմերի համաձայնությամբ.

2) կոմիտեի կողմից՝ միակողմանի, եթե պատվիրատուի կողմից խախտվի սույն պայմանագրի 2.4.2-րդ կետում նշված պարտավորությունը.

3) պատվիրատուի կողմից՝ միակողմանի, եթե կոմիտեի կողմից խախտվեն սույն պայմանագրի 2.2.1-ին և 2.2.2-րդ կետերում նշված պարտավորությունները:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավերական է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Պատվիրատու	Կադաստրի կոմիտե
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Ձև N 3

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵՁԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Գույքագրման համարը	Օբյեկտի անվանումը և (կամ) ծածկագիրը	Ստացված նյութի տեսակը					Նյութի ոչնչացումը, արձանագրության համարը և ամսաթիվը	Ծանոթագրություն
			նյութի տեսակը, կոորդինատային համակարգը	բնօրինակի (պատճենի, այդ թվում՝ էլեկտրոնային կրիչի վրա) անվանահամարը	կազմողական բնօրինակը (հրատարակչական բնօրինակը)	տեղեկամատյանը (ֆորմուլյար)	այլ նյութեր		
1	2	3	4	5	6	7	8	9	10

Ձև N 4

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵՁԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

NN ը/կ	Դիմումի համարը	Դիմողի անունը, ազգանունը (անվանումը)	Դիմողի վավերապայմանները	Նյութի կամ տվյալի տեսակը				Տրամադրման օրը, ստացողի ստորագրությունը	Ծանոթագրություն
				նյութի կամ տվյալի անվանումը	չափի միավորը	քանակը	գույքագրման համարը		
1	2	3	4	5	6	7	8	9	10

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ